«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Սովորողի մեջ արժեքային համակարգի ձևավորումը Հրանտ Մաթևոսյանի «Աշնան արև» վիպակի կանանց կերպարների միջոցով
ԱՌԱՐԿԱ	Հայոց լեզու և գրականություն
ՀԵՂԻՆԱԿ	Սոֆյա Թալալայան
ՄԱՐԶ	Երևան
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Գ.Գյուլբենկյանի անվան 190 ավագ դպրոց

Բովանդակություն

Ներածություն _____3

Գլուխ 1 Ծմակուտյան աշխարհի հանճարը _____ 5

1.1 «Աշնան արև»-ի Աղունը ————————————---7

1.2 **Աղունի սերը** ————————————————————**9**

Գլուխ 2 Աղունի երջանկության բանաձևը ————————————11

2.1 Կռվող ու պայքարող Աղուն ————————————————————13

2.2 Ծմակուտյան աշխարհի հերոսուհիները

Աղուն-Արուս /սկեսուր/ հակամարտությունը ——————— 15

3. Եզրակացություն _____18

4. Օգտագործված գրականություն _____ 19

Ներածություն

Հայ և համաշխարհային գրականության մեջ գրողները հաճախ են անդրադարձել մարդու ազատության,ազատ կամարտահայտման,հասարակության մեջ նաև կնոջ դերի ու նշանակության հիմնահարցերին: Ուսումնասիրելով Հրանտ Մաթևոսյանի «Աշնան արև» վիպակի կանանց կերպարները՝ ծանոթանում ենք կանացի հոգեբանությանը, գործողությունների շարժառիթներին, կենցաղում գոյություն ունեցող առօրյա խնդիրներին, դրանց լուծման մաթևոսյանական տեսակներին. գլխավոր հերոսուհին հարցի լուծման իր տարբերակն ունի, թեև շատ հաճախ նրա վրա ճնշում է գործադրվում `ծեծվում է, ծաղրվում, հղի վիճակով սոված է մնում, գոմում ծնված որդուն տրորում է կովը և համապատասխան բժշկական օգնություն չի ստանում:Գյուղում հեքիմներ կային, և նրանք էին զբաղվում հիվանդների բուժմամբ: Ստեղծագործության մեջ կերտած գլխավոր հերոսուհու՝ Աղունի կերպարի, ինչպես նաև մյուս կերպարների համեմատության և հակադրության միջոցով ամբողջական պատկերացում կարող ենք տալ սիրո, ընտանիքի, մտերիմ ընկերների, նրանց հետ շփման, աշխատանքի, ազատության, ազատ արտահայտվելու, առողջության մասին: Աղունը դրանց վառ կրողն է, որի օգնությամբ էլ առաջադրվող խնդիրներին կարելի է տալ համապատասխան լուծումներ:

Թեմայի արդիականությունը

Վիպակում և ընդհանրապես Մաթևոսյանի արձակում ներկայացվում է հայ գյուղը իր կենցաղով, սովորություններով, առօրյա հոգսերով, խնդիրներով, խնդիրներ, որոնք բոլոր ժամանակներում էլ լուծում են պահանջում: Դրանք կենցաղային տարրական պայմաններն են՝ լուսավորություն, ջրագծերի անցկացում, երիտասարդների համար զբաղվածություն, որպեսզի նրանք չլքեն գյուղը, կարողանան աշխատել, ստեղծագործել, կարողանան արժեք ստեղծել, ամուր և ուժեղ լինեն երկրի սահմանները:

Նպատակները

Թեմայի յուրացումը կնպաստի նյութի գիտակցական, առավել տրամաբանված ըմբռնմանը, մտածողության զարգացմանը, բառապաշարի հարստացմանը,գրավոր և բանավոր խոսք կառուցելու հմտությունների մշակմանը,արժևորելու կանանց դերը ինչպես ընտանիքում, այնպես էլ հասարակության մեջ, բացահայտելու միջանձնային հարաբերությունները:

Խնդիրները

1. Իրազեկել սովորողներին և՛ վեպում, և՛ կյանքում կանանց նկատմամբ կատարվող անարդարությունները:

2. Ուսումնասիրել կնոջ արարքները՝ որպես արժեք

3. Մշակել ձև, սկզբունք՝ անարդարության դեմ պայքարելու համար, դրան հասնելու համար համառություն

Գլուխ 1 Ծմակուտյան աշխարհի հանճարը

20-րդ դարավերջին գրականությունը իր ուրույն գծերով կարևորվեց Հրանտ Մաթևոսյան գրողի գործերում։Հեռավոր Ահնիձորում ծնված գրողի մանկության տասնհինգ տարիները կյանքի անփոխարինելի դպրոց դարձան գրողի համար։ Նա մաճ բռնեց, խոտ հնձեց, կով ծնեցրեց, պատվաստ դրեց, և եթե առասպելի ջրհեղեղը կրկնվեր, Նոյան պես կարող էր վերստեղծել հողագործության և անասնապահության մեծ մշակույթները, և մարդկանց հիշողությունը հանկարծ խաթարվեր, ազգակիցներին և երկրացիներին այն օրերի վարքից կարող էր ժողովել մարդկային բարոյականության օրենսգիրքը։Մաթևոսյանը կերտեց իր ոճին բնորոշ հերոսներ։ Գյուղի ու քաղաքի սահմանագծի հերոսներն ունեն յուրօրինակ պատկերացումներ կյանքի, աշխարհի, աշխատանքի, ընտանիքի, հայրենասիրության մասին։ Մաթևոսյանն արդար կեցության և ազգային գոյի իր փիլիսոփայությամբ, ծմակուտյան ուրույն երանգով հարստացրեց քսաներորդ դարի արձակը, որը ազգային է՝ կերպարների մտածողությամբ ու հոգեբանությամբ։ Նա նաև համամարդկային է՝ նախ ազգային խոր ներթափանցումների, ապա՝ մարդկային գեղեցիկ ու ներդաշնակ կյանքի երազի համար։ Մաթևոսյանը ժառանգորդն է Թումանյանի և Բակունցի գրական ավանդների։ Եթե այս գրողների ստեղծագործությունները այսօր էլ արդիական են, կնշանակի արդիական է նաև Մաթևոսյանի արձակը։ Գունագեղ, փիլիսոփայական խորհրդածություններով, ժողովրդական բառ ու բանով են համեմված Մաթևոսյանի արձակը։ Գյուղը գրողի աշխարհն է, համակրելի հերոսները՝ տքնաջան աշխատանքով բարիք ստեղծող մարդիկ՝ աշխարհը աշխարհ դարձնողները։ Մաթևոսյանը գրում է բարդ ոճով, լեզուն խիտ , միտքը անվերջ ճյուղավորվում է, համալրվում նոր ասելիքներով։ Մաթևոսյանը նախադասությունները կառուցում է մանրամասների ճշգրիտ արժեքավորմամբ։ Դիպուկ երկխոսությունները Մաթևոսյանի արձակի բնորոշ առանձնահատկություններն են։ Կամ նրա հերոսների խոսքերը սրերի պես խաչաձևվում են, կամ գրողն ինքն է հումորով նայում նրանց խոսքին։

Մաթևոսյանի երկերին բնորոշ է փոքր սյուժեն, մեծ ասելիքը։ Գրողն իր առջև նպատակ չի դնում ինչ-որ բան պատմել, սյուժե ստեղծել, նա պարզապես

ներկայացնում է կենդանի ու թրթռուն իրականությունը, շոշափելիության չափ իրական մարդկանց, և դրանում է նաև նրա արվեստի մեծ հմայքը։

Առանց «Աբու-Լալա Մահարու» անապատը կլիներ միայն ավազուտ: Մարդատյաց աշխարհը մարդասիրացել է: Գրականությունը մարդկության կարոտն է կյանքին: Մանումենտալացնելով գրականությունը մեզ կարոտել է տալիս մեր կողքին իսկ գտնվող մարդուն, հատը երեսուն կամ հիսուն կոպեկ արժեցող շուկայի վարդը դարձնում է քնարական, Աստծուն հավասար արարիչ է գրականությունը՝ չնայած ամեն մի Գարսիա Լորկայի կարող է շանսատակ անել ամեն մի լեյտենանտիկ, ամեն մի Սարոյանի սողալ կիրամայի ամեն մի վաշտապետ:

«Գրականությունը աշխարհի ազնվանալու տառապալից ճիգն է: Դա գրականության կոչումն է ի ծնե»:

Մաթևոսյանական մեջբերումից հետո անցում հիմնական թեմային՝ վիպակին, որի միջոցով կփորձենք բացահայտել ոչ միայն վիպակի կերպարները, արդիականությունը, այլև սովորողի արժեհամակարգի ձևավորումը հենց վիպակի միջոցով։

Բոլոր հարցադրումները կտրվեն նյութի սկզբնամասում, որպեսզի հետազոտության համապատասխան բաժիններում հիմնավորվեն պատասխանները։

ա/վիպակում կանանց քանի՞ սերունդ է ներկայացրել/մայր, դուստր, հարս, թոռ/

բ/ո՞ր ժամանակաշրջանն է պատկերված վիպակում

գ/բնավորության ինչպիսի՞գծերով են կերտված յուրաքանչյուրը

դ/ո՞ր հերոսուհուն առաջնահերթությունը կտայիր

ե/կցանկանայի՞ր լինել Աղուն

զ/բռնության տարրեր կայի՞ն վիպակում

է/ինչպե՞ս կարող եք պայքարել անարդարության դեմ

Գլուխ 1

1.1 «Աշնան արև»-ի Աղունը

Հրանտ Մաթևոսյանը իր «Աշնան արև» վիպակով գրականություն բերեց նոր՝ արդիական, կնոջ կերպար: Մաթևոսյանի կերտած կինը տարբեր է նախորդ շրջանում կերտած կանանցից: «Աշնան արև» վիպակում յուրովի մոտեցմամբ է կերտել գլխավոր հերոսուհուն՝ Աղունին, որը գյուղի և քաղաքի սահմանագծում կռիվ է տալիս: Վիպակում գործում են նաև մի շարք կերպարներ՝ սկեսուրը՝ Արուսը, հարևանի կինը՝ Փիլոյի Արուսը, հորաքույր Մանուշակը, տալը՝ Սիրանը, վիպական գործողություններին չմասնակցող մերացուն՝ Շողերը, որոնք գալիս են՝ ամբողջացնելու և բացահայտելու Աղունի կենսունակ կերպարը:

Աղունը կարմիր թշերով լիքը աղջիկ էր: Առանց իր կարծիքը հարցնելու տասնհինգ տարեկան Աղունին ամուսնացնում են մեծագլուխ, սև Սիմոնի հետ: Դարպասեցի խորթ մայրը համոզում է Իշխանին՝ հորը. «Իրեն մի՛ հարցրու Իշխան ջան, էն տղի մոտ չուզեցի ասել, իրեն որ հարցնես՝ էն է ջուր է բերում, էլի,մարդի չի գնա»: Եվ Աղունը որոշում է գնալ «այդ տղայի հետ», որպեսզի էլ երբեք չտեսնի դարպասեցու և Իշխանի երեսը: Սիմոնի ընտանիքի անդամները ունեին ծակող, խայթող լեզու. նրանց Աղունը հակադարձում էր՝ երբեք կուլ չգնալով: «Պահ, պահ, պահ,- ասաց Ադամը,- լեզուն էլ է բերել: Ես իմ, էնքան հանկարծ եկար՝ ասի լեզուդ էնտեղ մոռացած կլինես»:

Աղունի ամբողջ կյանքը «կռիվ» է ու «պայքար»: Նա ունեցել է դառը ճակատագիր, որի մասին ասում է. «Աշխարհքը լիքը տղա՝ գնա Աղունիկ, Սիմոնից մարդ սարքիր, գոմից տուն սարքիր, Արմենակից Արմենակ սարքիր…Սարքիր, սարքիր, հետո էլ արդեն ոչ առողջություն կա, ոչ էլ խնդալու սիրտ»: Չորս կողմից նախատում ու քարկոծում էին նրան. ոչ թե անունով էին դիմում, այլ առնաուտ քուրդ էին կոչում ու քարով խփում, իսկ ամուսինը խեղճ-խեղճ նայել է: Կային հայր և մայր, նրանք էին որոշում՝ ինչպես վարվել հարսի հետ: Կար ճնշում, հեգնանք, բռնություն, բայց Աղունը գնալու տեղ չուներ. դա էր պատճառը,որ նա հահդուրժու էր այդ ամենը:

Այստեղ կփորձենք բանավիճել հարցադրումով «.Այսօր հնարավոր է աղջկան ամուսնացնել իր կամքին հակառակ»:

Մեկ տարի հետո, երբ նա մայրանում է, չի փոխում իր վերաբերմունքը շրջապատողների նկատմամբ: Նա ցանկանում է առանձնանալ, ստեղծել իր առանձին տնտեսությունը: Եվ ստեղծում է:

Աղունը աղունական փիլիսոփայություն ունի. «Ամեն մարդ ապրում է իր կյանքը: Որդու ուրախությունը որդունն է, իրենը պորտի ցավն էր, կռիվ է Սիմոնի հետ, գարունների հետ՝ կարտոլի հոգսը, ամառների հետ՝ կովերի հոգսը,աշունների հետ՝ ձմեռվա հոգսը: Իսկ որդին ստանում է բուռ-բուռ»: Երբեք իր առողջության մասին չի մտածում, ունի բազմաթիվ հիվանդություն, բայց անտարբեր. լուռ տանում է ցավերը:

Դառնությամբ է հիշում իր անարև երիտասարդության օրերը. հիշում է տունը «բաժանքի» առաջին ձմռանը, դեռ պատերը թաց էին, վառարանը տաքացնում էր ինքն իրեն, իսկ պատերի տակ՝ սառնամանիք, և թաց տակաշորերի մեջ երեխան թպրտում էր: Եվ հիշում է՝ ինչպես Մուրադենց Սրբուհին տղամարդու հին շապիկներ բերեց, իսկ Սիմոնը գյուղամիջում ակումբն էր սարքում, սրախոսում էլ էր…Երեխան լաց էր լինում, և ինքը հասկացավ…Սրբուհու բերած շապիկների մեջ ոջիլ կար, երեխան բլթբլթոտել էր, տաքություն էր տալիս…Բողոքում է, բղավում, և առավոտ լույսի հետ Սամվել եղբայրը քսան մետր սպիտակ կտոր է բերում:Փորձենք համեմատել այսօրվա հետ. մի՞թե այսօր էլ դժվար պայմաններում ապրող ընտանիքներ չկան:

Մաթևոսյանը Աղունի ներկան և անցյալը խառնում, շաղախում, հունցում է այնպես, որ երբեմն դժվար է լինում առանձնացնել: Մաթևոսյանական վերհուշի առանձնահատկությունը հենց սա է:

1.2 Աղունի սերը

«Ամեն կին իր ամուսնու համար պիտի սեր լինի». սա է Աղունի սկեսրոջ կարծիքը: Եվ պատմում է իր ամուսնու մասին, երբ հնձից, գոմերից կամ ձմռան փայտատեղից եկել է , նրան տաշտի մեջ է դրել ու տաք ջրով, գոլ ջրով լողացրել:Սիմոնի մայրը ցավ է ապրում, որ իր որդին սեր չի տեսել Աղունից, վերջինս հակադարձում է՝ ասելով «Իմ ցեղում էդ ապրանքից չկա»: Իր սերը իր երեխաներն է համարում:

Աղունը թեև հերքում է, որ չի սիրում Սիմոնին և իր ցեղում էդ ապրանքից չկա, բայց արարքները այլ են ապացուցում: Նա սիրել է և գուցե նաև սիրում է Սիմոնին: Դա երևում է վիպակի մի քանի հատվածներում: Երբ տան մեջը քարելիս Սիմոնի փորը պատռվում է, «պառավը եկավ, յախու դրեց փորին,Ադամը եկավ,- Մարդակի համար իզուր կլինես նեղացած, Սիմո՛ն, եկել եմ քարը քանդեմ,- Սիմոնն ասաց՝չէ, Ադամ, շտապ չի, դու ավելի շտապ գործեր կունենաս, գնա արա, քար է էլի, կամաց-կամաց կքանդենք թող իր համար էդտեղ էնքան մնա՛,- և այդ պատճառով իսկ Աղունը Սիմոնին կրկնակի սիրեց»:Նա իր ամուսնու փորին յախու դրեց:Երբ հերթական ծեծից հետո գնում է հորաքրոջ տուն,որովհետև գտել էր սկեսրոջ արած գիրութուղթը և ցույց տվել Սիմոնին, մի քանի օրից ետ է վերադառնում ու գտնում ամուսնուն սառած հատակին ընկած: Կրակ չկար, գիշեր էր, ննա Սիմոնին տաքացնում է իր մերկ մարմնով,հետո գնաց հորաքրոջ տուն կրակ բերելու: Գիշերով անցնում է գերեզմանների մոտով, շները հարձակվում են նրա վրա, և լեղապարկի հիվանդությունն իր մեջ այդ գիշեր առաջացավ:

Երկաթուղու Զորագէս կայարանում Աղունը նայեց լուսավոր խանութի ցուցափեղկին, ապա նայեց Սիմոնին: Եվ Սիմոնը բարի, խեղճ ու հասկացող էր: Եվ Սիմոնն ասաց. «Վայ թե տրուսիկ ես ուզում, ախչի», և ինքը գլխով այո ասաց և ուրիշ կողմ էր նայում, և ուզում էր արտասվել:…Եվ եթե մեր միջև սիրո պես մի բան եղել է՝այդ եղել է Զորագեսս կայարանի լուսավոր խանութում:Գուցե և սիրեր Աղունը իր ամուսնուն անմնացորդ, բայց բռնությունը շատ էր. ծեծը հաճախակի էր:

Մի՞թե հոգատարությունը սեր չէ: Աղունի և սկեսրոջ՝ Արուսի երկխոսություններում երևում է նրա վերաբերմունքը դեպի Սիմոնը. նրա գուլպան ծակ չի եղել, շապիկը կեղտոտ չի եղել, Սիմոնը սոված չի մնացել, անկողինը կեղտոտ

չի եղել, տանը միշտ ճաշացու է եղել, և Սիմոնը միշտ կուշտ է եղել: Աղունը ցանկացել է, որ ամուսինը մարդկանց մեջ պատշաճ տեսքով ներկայանար.« Ամեն անգամ երեսի բուրդը մինչև խուզել եմ տալիս՝ մի կռիվ լինում է: Ես էսքանն եմ, ինչքան կարողացել եմ՝ տվել եմ, որ չէի կարող՝ չէի հնարելու»:Եվ վերջապես, երբ տեղեկանում է Սոնայի և Սիմոնի կապի մասին, կռիվ է անում. կարտոֆիլի բերքահավաքի ժամանակ ցանկանում է նրան ծեծել, սակայն լաչառ Շուշանը բահով վրա է քշում և չի թողնում. պատերազմում զոհված ամուսիններին Սիմոնը կարող էր փոխարինել, և Աղունը զայրանում է, բողոքում, հետո սիրովանում: Հասկանում ենք, որ խանդն է խոսում: Իսկ Սիմոնը հիշում է անկողնում մորեմերկ Սոնային, որը գեղեցիկ է, սիրով լեցուն, իրեն սեր ու ջերմություն է տալիս, հանգստություն, և սա Սիմոնի հիշողության մեջ մնում է հավիտյան:

Գլուխ 2 Աղունի երջանկության բանաձևը:

Էմիլ Զոլայի՝ «Կյանքում միակ երջանկությունը առաջընթացի մշտական ձգտումն է» աֆորիզմը բնորոշ է Աղունի երջանկության բանաձևին: Աղունը ունի երջանկության իր բանաձևը: Երջանիկ է յուրովի, դժբախտ՝էլի յուրովի. ունի երկու որդի և դուստր:Վերջինս փախչում է Կիրովական պատմության ուսուցչի հետ: Տղան տուն ուներ, ճարպիկ էր, կարողանում է կնոջը տեղավորել դպրոցում ջոկատավար և մանկավարժական ինստիտուտ՝հեռակա: Թվում է՝նրան չի հուզում աղջկա արարքը, բայց նա խորը ցավ է ապրում: Մաթևոսյանը չի ծարունակում սյուժետային այս գիծը, բայց մենք կարող ենք ենթադրել, որ Աղունը հասկանում է, որ իր աղջիկը ամուսնացել է սիրելով: Աղունը երջանիկ է իր երազանքներով. Արմենակ որդին ամուսնանալու է «մաքուր, կարճ հագնված թոռները դեռ պիտի գան ամառները, թիթեռ պիտի բռնեն ամառները քաղաքի ձևով, պիտի խոսեն Ծմակուտի սպիտակ արևի մեջ Երևանի շեշտով,- Արա՛, Սամվե՛լ,- հարսը դեռ պիտի կանչի Երևանի շեշտով դեպի գետափ՝ աչքերը Ծմակուտի արևից կկոցած .-Սամվելի՛կ…»: Երազող է մեր հերոսուհին. իր որդու կողքին ուզում է տեսնել այն կնոջը, որը կերջանկացնի Արմենակին:Իր ստեղծած բարիքները տանում է որդուն. սիրով ու հոգատարությամբ իրար վրա է դարսում այն ամենը, ինչ, ինչպես նրան է թվում, պետք է որդուն. մեղր, կարագ, ձու, ավելուկ, գորգ, անկողին: Աղունը շատ է կարևորում ուսումը. ինքը ընդամենը երեք ամիս է դպրոց հաճախում. խորթ մայրը թույլ չի տալիս: Որդուն՝ Արմենակին քաղաք է ուղարկում սովորելու, և որդու ամեն մի հաջողությունը իրենն է համարում, անգիր է անում որդու գրած բոլոր հոդվածները: Դստերը ևս ուղարկում է Կիրովական՝ ուսում ստանալու. ինքը այլ կերպ չէր կարող: Աղունը ուսման ծարավ ունի: Կրտսեր որդուն՝ Սերոյին ևս հորդորում է սովորել:Աղունը տոգորված է հայրենասիրությամբ. անգիր գիտեր Հովհաննես Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմը, որդու դիմաց կանգնած արտասանում է ոգևորված և սիրով: Կարո՞ղ ենք պատկերացնել, թե ինչի կհասներ Աղունը, եթե համապատասխան կրթություն ստանար, դառնար իրավապաշտպան, կանանց իրավունքների պաշտպան:

Տարբերվում է Աղունը բոլորից: Տասնհինգ տարեկան առանց օժիտի քաղաքից գյուղ հարս է գալիս Սիմոնենց բազմանդամ ընտանիք: Միշտ երեսով են տալիս նրա անօգնականությունը, հալածում են, մեղադրում, որ գորգ չի կարող գործել, գյուղական գործերում ապաշնորհ է. կով չի կարող կթել, ցորենը՝ էրնել, դաշտում աշխատել: Սակայն Աղունը այս ամենը ոչ միայն սովորում է, այլև դառնում է վարպետը: Ավելի դաժան են վարվում նրա հետ. երեսին են շպրտում՝ չբեր: Երբ փորձում է պաշտպանվել՝ ասելով, որ «տասնվեց տարեկան եմ», պատասխանը նրան սաստելն էր և կողպեքը վրան շպրտելը:Աղունը ճարպիկ է, նպատակասլաց, արագ է կողմնորոշվում և միշտ զայրանում է ամուսնու՝ Սիմոնի դանդաղաշարժության համար: Տանը ամեն ինչ ստեղծել է իր համառության, աշխատասիրության շնորհիվ:

Աղունը սիրում է սովորել: Խորթ մայրը նրան երեք ամիս հետո չի թողնում դպրոց գնալ:Սովորելը մնում է երազանք: Զգտումն այնքան մեծ է, որ որդուն՝ Արմենակին, ուղարկում է սովորելու: Երբ արդեն աշխատում է տղան, Աղունը երազում է նրան տեսնել պաշտոն ստացած, նույնիսկ հորդում է ամուսնուն հրավիրել տղայի ընկերներին և ղեկավարին գյուղ, ուտեն-խմեն, ու բոլորը տեսնեն, որ Արմենակը անտեր չի: Նա անգիր գիտի որդու գրածները:

Գլուխ 2

2.1 Կռվող ու պայքարող Աղուն

Աղունը կռվող է և պայքարող, Սիմոնն ու իր ընտանիքը՝ եղածով բավարարվող: Նրանց խորթ է Աղունի անհանգստությունը: Սիմոնի ընտանիքը չի սիրում, երբ իրենց կյանքի միապաղաղ ընթացքը խանգարում են: Ստեղծելու, կյանքը լավացնելու, չխեղճանալու մի զորեղ կամք կա այս կնոջ մեջ. «-Տուն ենք սարքում:

-Ինչո՞վ ես սարքում:- Էս ձեռքերովս:

-Գնա սարքիր,- Սիմոնը հրեց նրան ու դուրս եկավ՝ ինքը դարձյալ կտրեց նրա ճանապարհը.-Տուն ենք սարքում»: Եվ նրա համառությունը տուն ու տնտեսություն դարձավ: Սիմոնը նրան ծեծում էր. այդ տան ամեն մի իրը ստեղծվել է ծեծվելու գնով:

Հիշաչար չէ Աղունը, նրա սիրտը բարի է: Սրտի ցավ է ապրում, որ սկեսրայրի վրա տապանաքար չկա: Քարը տաշել է տալիս ծեծ ուտելու գնով. ամոթ էր. երեք որդի ուներ, երեքն էլ կենդանի: Երբ հորդորում է քարը բերել, միայն ծեծ է ուտում և ծերանում, աչքերի տակ տոպրակներ են կախվում, ու այդպես էլ քարը Դսեղի ձորից չի հասնում տեղ: Բոլորը սպասում են, որ Աղունը պետք է բերել տա ծեծ ուտելով: «Էլ պրծավ, չէ, էլ ծեծ չեմ ուտի: Ինձ մաշեցի, ու ինչի տեր եմ: Քառասուն տարեկան չեմ-ութսուն եմ»: Նա կորցնում է երիտասարդությունն ու գեղեցկությունը: Այստեղ երևում է Աղունի նվիրվածությունը իր ընտանիքի հանդեպ: Ընտանիք սիրող մարդը չի կարող չսիրել նաև հայրենիքը: Մաթևոսյանի կերտած կնոջը տեսնում ենք կյանքի բոլոր ոլորաններում, և բոլորում էլ Աղունը տարբերվում է:

Վիպակում պատկերված է հայ գյուղը Հայրենական պատերազմից առաջ և հետո: Կյանքը այնտեղ դանդաղ է ընթացք ունի: Պատերազմ մեկնած տղամարդկանց փոխարեն աշխատում և արարում են կանայք: Բոլոր ժամանակներում հայ կինը պատերազմների ժամանակ հոգսը իր ուսերին է վերցնում:

Հետաքրքիր է նրա ռեալիզմը. Եթե խոսքը ճակատին չասի, կհիվանդանա «ես ռեալիստ եմ, եթե խոսքը ճակատին չասեմ՝ կհիվանդանամ: Քո մարդը բերում է

/ասում է հարևան Արուսին/, իմը չի բերում է, բայց իմ ունեցածը քոնից մի քիչ ավելի է, պակաս չի, քանի որ էս տան կինը Աղունն է»: Հարևան Արուսին կանչում է ցույց տալու՝ ինչ է տանելու քաղաք Արմենակ որդուն՝ հաստատ համոզված լինելով, որ հաջորդ վայրկյանին հարևանուհին տեսածը կտարածի գյուղով մեկ: Աղունը հաստատ գիտի, որ Սիմոնի կեսը իրենն է, կեսը՝ ուրիշներինը, իսկ ընդհանրապես՝ կոլխոզինը: Սիմոնին հանրային ամուսին է անվանում: Սուր լեզու ունի Աղունը. սա է պատճառը, որ շատ հաճախ է քարկոծվում և ծեծվում: Աղունը մաքրասեր է, պատվախնդիր: Տղային՝ Արմենակին, տանում է տասներկու կիլոգրամանոց բուրդը մաքուր լվացած ներքնակներ, վերմակներ, որոնց երեսները Մոսկվայից են բերված, իր ձեռքով գործած գորգ, ղաուրմա, այն ամենը, ինչ հնարավոր է տանել: Դրան էլ ավելացնում է հազար ռուլին: Փիլոյի Արուսը նրան խելագար է անվանում:

«-Ախչի՜, դու հիմար ես: Ախչի, տո հարսիդ հերն էլ թաղեմ, տղիդ հերն էլ անիծեմ, ախչի՜,դու էս տունը սրբած տանում ես ում համար»:

Աղունը հեշտ չի ապրում, իր մասին չի մտածում: Նա կարողացել է ստեղծել իր տունը, օջախը՝ հակառակ ամուսնու և նրա ծնողների, կրթության է տվել իր երեխաներին՝ հակառակ խորթ մոր, որը իրեն դպրոց է թողել երեք ամիս, և երբ որդին ամուսնանում է, նա իր ստեղծածից առատորեն բաժին է հանում որդուն:

Գլուխ 2

2.2 Ծմակուտյան աշխարհի հերոսուհիները

Աղուն-Արուս /սկեսուր/ հակամարտությունը

Աղուն-Արուս /սկեսուր/ հակամարտությունը երևում է վիպական շատ դրվագներում:

Պառավին թվում էր, Աղունը կախարդել էր իր որդուն և նրան էր պարզել իր բարի ժպիտը և նրա հետ անում տոհմական շռայլ կատակները: Բայց այդպես չէր: Պառավը գիր անել էր տալիս: Սիմոնի բաժինք վերմակի մեջ Աղունը եռանկյուն մոմլաթ թուղթ գտավ: Մութաքայի մեջ կար, բարձի մեջ կար: Մինչև հիմա էլ նեքնակի բրդից դուրս են գալիս: Շեմքատակից ևս հանեցին. սա հատուկ գիր էր, որի մեջ Աղունի մազերից կար: Սիմոնը հիվանդացավ գլխացավով: Այս ամենը պառավին ասելու և գտածը ցույց տալու համար էլի ծեծ է ուտում:

Աղունի կերպարը ավելի ամբողջական է դառնում վիպակի մյուս կերպարների՝ սկեսրոջ, հարևան Արուսի, հորաքրոջ, Սիրանի, Սոնայի ֆոնին: Հարևան Արուսի շորի փեշերը իրար տակից երևում էին, բուրդը առանց լվանալու ներքնակի մեջ էր լցնում, ծնկները չռած նստում էր վառարանի մոտ, իսկ նրա գորգը փողով գործում էին հովիտեցիք: Ճաշը դնում էր կրակին ու գնում աղբյուրում կանգնում զրուցելու, ճաշը վառվում էր, ծուխը լցվում տուն ու պատերը սևացնում, իսկ Արուսը սրա լուրը բերում էր նրան, նրանը՝ սրան:Նա ժամակակ չունի բամբասելու, երկար-բարակ զրուցելու, ամբողջ օրը աշխատում է, տանը եղածի պակասը լրացնում:

Վիպակում հեղինակը կերտում է նաև **պատերազմում ամուսիններին կորցրած կանանց կերպարները**՝ հանձին Սոնայի: Նա սեր ու քնքշություն է տալիս Սիմոնին: Մի օր, երբ Աղունը ցանկանում է ծեծել Սոնային, լաչառ Շուշանը բահն առած վրա է քաշել.«Այ ախչի,է՛յ…գլուխդ աշխատում է թե չէ: Հիտլերի դեմ մերոնք որ զոհվեցին մենակ մեզ համար չզոհվեցին, ու ձերոնք էլ որ էդպես ողջ-առողջ եկել են՝ մենակ ձեզ համար չեն եկել, է՛յ…»:

Աղունը գիտակցում է, որ ինքը կոպիտ է, սեր ու քնքշանք չի տալիս իրեն հարազատ մարդկանց, հատկապես երեխաներին, բայց բնույթն է այդպիսին: Թեպետ զղջում է իր արածների համար, թեպետ հասկանում է, որ չոր է ու կտրուկ, բայց իրեն փոխել չի կարող: Դա է պատճառը, որ դատապարտված է միայնության հարազատների ու շրջատատի կողմից: Աղունը հաստատ գիտի, որ «Իմ լեզուն իմ թշնամին է «-իմ լեզվի շնորհիվ է աչքի ընկել իմ որդին: Մի լեզու ունեի, մի խեղճուկրակ ամուսին և մի կարպետ»: Նրա կողքին ապրելը դժվար է. որդիներն անգամ դժվարությամբ են լեզու գտնում հետը:

Սկեսուրը՝ Արուսը ատելություն չի ունեցել նրա հանդեպ.«Սիրուն էիր, լավն էիր,-ասաց պառավը,- ամանները ձեռիդ որ շխկշխկալով ջուրն էիր իջնում՝ մարդու խինդ էր գալիս, բայց լեզվիդ պատճառով Սիմոնս օր չտեսավ»:

Սկեսուրը հաշտության եզրեր է փնտրում Աղունի հետ: Երբ վերջինս հիշեցնում է, որ սկեսուրը տարածել էր, որ լրբություն է անում, Արուսը ասում է .«Բավական է, անցած բանի ետևից չեն ընկնի: Վատ եմ եղել՝ վատ եմ եղել: Աստված ինձ վատ է ստեղծել՝ վատ եմ եղել…ես քեզ խրատ՝ հարսներիդ հետ դու լավ կլինես»:

Աղունի մենախոսության մեջ երբեմն ցավ, հուսահատություն, երբեմն նաև անորոշություն կա.«Երեխա էինք, աղջիկ էինք, դեռ երեկ էր՝ կարոտում ու սպասում էինք ինչի՞: Մի լավ բանի սպասումից սիրտներս թրթռում էր ինչու՞: Աքաղաղը կանչում էր լուսամուտի տակ՝ ասում էինք հյուր է գալու: Սիրտներս հոգնեց թպրտալուց, էլ չի խփում: Օ՜ֆ, հյուր էր գալու, հյուր էր գալու, սիրտներս պատռեց լավի կարոտից, հյուրը եկավ՝ ղազախեցի չարչին իշով, նռով ու ոջիլ շալակին: Օֆ, պատերազմ էր՝ մաճ էինք բռնում ու լաց էինք լինում, կալ էինք կալսում, պարկ էինք քարշ տալիս, հունձ էինք անում, եզ էինք պայտում, երգում էինք ու լաց էինք լինում, կարոտում էինք ու սպասում էինք ինչի՞: Թպրտաց, թպրտաց ու հանգավ մորթած հավի պես: Օ՜ֆ, երանի գերեզմանոցում ննջողներին:

-Մնաք բարով դուք, արոտներ սիրուն,

Ամառն անց կացավ,հոտն իջնում է տուն…»

Էական չէ, թե մարդը ուտեղ է ապրում. եթե սիրում է բնությունը, ուրեմն սիրում է նաև բանաստեղծություն;:Այդ համատարած գորշության, դժվարությունների ու պայքարի

ճանապարհին Աղունը իր հայրենի եզերքի նկատմամբ անսահման սեր ու նվիրվածություն է դրսևորում:Սա է, որ պետք է քննարկել,արդիականացնել:

Աղունի պես կանայք կյանքը առաջ են տանում, բայց նրանց կողքին տղամարդը, երեխան իրենց իրենց լավ չեն զգում. նրանց շուրջը սառնություն է և ոչ թե ընտանեկան ջերմություն: Աղունի անարև մանկությունն է ստիպում այդպիսին լինել, որովհետև նա էլ չէր տեսել այդ քնքշությունն ու ջերմությունը: Այս ամենով հանդերձ՝ Աղունը հավատով է նայում վաղվա օրվան, գալիքը տեսնում է մտքով հասունացած մարդու կենսափորձի՝ աշնան արևի միջից: Փորձենք Աղունին տեղափոխել 21-րդ դար, արդիականցնենք. գտնենք այսօրվա կանանց մեջ աղունական բնավորության գծեր, արարքներ, հասկանանք՝ կարո՞ղ է այսօր քաղաքից աղջիկը հարս գնալ գյուղ, դիմանալ գյուղական կյանքի դժվարություններին:

Ժամանակի և տարածության մեջ ինչպես են պայմանավորում գրական երկի կերպարները: «Գրականությունը փնտրում է չաղավաղված մարդուն ու չաղավաղված փոխհարաբերությունները՝ մի կողմից չափազանցնելով մինչև աբստրակցիա մարդու և փոխհարաբերությունների աղավաղումը, մյուս կողմից մարդկանց փոխհարաբերությունները ցուցադրելով անաղարտ, մաքուր, բնական, մինչև անգամ նախնական վիճակում»:

Եզրակացություն

Ուսումնասիրելով Հրանտ Մաթևոսյանի «Աշնան արև» վիպակը՝ կարող ենք ասել, որ այն արդար կեցության և ազգայի գոյի փլիսոփայությամբ, ծմակուտյան ուրույն երանգով հարուստ ստեղծագործություն է: Տաղանդավոր գրողը վիպակում պատկերել է Ազգային և հանրային կյանքը Հայրենական պատերազմից առաջ և հետո՝ նպատակ ունենալով ցույց տալ հայ գյուղի և գյուղացու ծանր վիճակը: Վիպակը հնարավություն է տալիս հասկանալ հայ կնոջ ծանր վիճակը,մանկուց որբ մեծացած կնոջ հոգեվիճակը որպես մայր, հարս, կին, և վերջապես որպես սկեսուր:Այսօրվա սովորողը հստակ պետք է կարողանա կերպարը վերլուծել, ներկայացնել վիպական գործողությունների հանգուցային մասերը,կարողանա համեմատել և հակադրել կերպարները, առանձնացնել նրանց դրական և բացսական հատկանիշները, կարողանա արտահայտել սեփական կարծիք, կարողանա բանավիճել, ունենա քննարկելու հմտություն:Միջնակարգ ծրագրի ուսումնառության ակնկալվող վերջնարդյուքներից ելնելով ՝ վերլուծի և գիտակցի տարբեր գործոնների ազդեցությունը Աղունի, ինչպես նաև իր անձի ձևավորման վրա, կարևորի ինչպես հերոսուհու, այնպես էլ իր՝ որպես քաղաքացու դերը հասարակության մեջ սոցիալական արդարության և ժողովրդավարական մշակույթի ձևավորման գործում, ցուցաբերի հարգանք ցանկացած մարդու արժանապատվության, հիմնարար իրավունքների և ազատությունների հանդեպ, ճանաչի և տարբերակի բռնության դրսևորումները, կարողանա արձագանքել, դիմակայել, խուսափել և պաշտպանվել, ցուցաբերի ակտիվ դիրքորոշում հասարակական գործընթացներում կանանց և տղամարդկանց հնարավորությունների ընձեռման ապահովման համար,ճանաչի իր դերը և պատասխանատվությունը ընտանիքում, խմբում և հասարակության մեջ, տեղեկացված լինի մարդու վերարտադրողական առողջության պահպանման, ընտանիքի, անձնական կյանքի պլանավորման մասին, բարի առողջ և անվտանգ կյանք:Այս ամենին հասնելու համար շատ կարևոր է, որ սովորողները տիրապետեն կարողունակություններին՝ լեզվական գրագիտությանը, սովորել սովորելու, ինքնաչանաչողական և սոցիալական,ժողովրդավարական և քաղաքացիական, մշակութային և տնտեսական:

Օգտագործած գրականության ցանկ

1. Հր.Մաթևոսյան «Սպիտակ թղթի առջև» Երևան 2005թ. էջ434
2. Հր.Մաթևոսյան «Վիպակներ», Երևան «Նաիրի» 199
3. Հր.Մաթևոսյան «Այսպես կոչված գյուղագրության մասին», էջ 452
4.«Հանրակրթության Պետական Չափորոշիչ»

/Միջնակարգ ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները 34, 35, 36, 37, 38, 39, 40, 41, 41 կետեր/